

**ԱՆՈՒՆ ԳԱԳԻԿԻ
ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Զութակահար,
Երևանի Կոմիտասի անվ. պետական
կոնսերվատորիայի դոցենտ
E-mail: al.achemyan@yandex.com**

«Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի անդամ Գոհար Կառլենի Շագոյանի
և ԵՊԿ Կամերային ամբիոնի երաշխավորությամբ վարիչ Զ. Խաչատրյան
ընդունվել տպագրության դեկտեմբերի 11-ին
ներկայացրել է հեղինակը՝ հոկտեմբերի 10-ին

Կատարողի բեմական հոգերանական ազատության մասին

Հրապարակային ելույթը երաժշտի համար լուրջ գործ է: Կատարողը պատասխանատու է ունկնդրի, հեղինակի, ինքնի իր, եթե ուսանող է, նաև դասախոսի առջև: Ինչպես զրել է Կ. Ստանիլավսկին իր «Работа актера над собой» գրքում. «Писатель, композитор, художник, скульптор не стеснены временем. Они могут работать тогда, когда находят для себя удобным. Они свободны в своем времени. Не так обстоит дело со сценическим артистом. Он должен быть готов к творчеству в определенное время, помеченное на афише. Как приказать себе вдохновляться в определенное время? Это не так-то просто» (1. էջ 301):

Եվ դրանով համերձ, դա սոն է, կամքի լավագույն րոպեները, երբ նա կարող է ստանալ հսկայական գեղարվեստական բավականություն: Ամեն ինչում, ինչը վերաբերում է ելույթին՝ կատարողի ստեղծագործական լյանքի այդ վճռական պահին, առանձնապես հաշվետու, արտահայտվում է երաժշտի անհատականությունը: Բեռում ունեցած վարքը, կատարման ժամանակ ունեցած ինքնազգացողությունը, դեպի լսարանը ունեցած վերաբերմունքը, - այս բոլորը յորաքանչյուր կատարողի մոտ յուրովի է երևան գալիս: Բոլորը գիտեն, որ «свобода есть осознанная необходимость. Отсюда прямой вывод: свобода есть антипод произвола, враг анархии, как космос – враг хаоса» (2. էջ 101):

Որքանով որ ազատության նախապայմանը հանդիսանում է կատարությունը, այնքան, որեւէն պետք է առաջին հերթին այդ ձեռք բերել: «В какой-то момент может случиться так, что чувство ответственности перед слушателями вырастает до таких размеров, такой силы, что вы вдруг чувствуете, что перестаете владеть собой, и тогда все возможно – возможны и ошибки, и «мазни»» (3. էջ 231):

Ծառ անփորձ նվազողներին հասուլ է երկուությունը, ինչ-որ վախ, ահ, սարսափ, որն արտահայտվում է հաճախ այն բանում, որ նրանք երբեմն այն նոտաները չեն նվազում, որն անհրաժեշտ է, շատ ավելորդ շարժումներ են անում, ընկճակած են, ինտոնացիոն անմա-

քուր են նվազում՝ ընդհանուր առնամբ հանդես բերելով անվատահության բոլոր նշանները իրենց անհաջող հետևանքներով հանդերձ: Անվտանգությունը հաղթահարելու համար, որոշ ուսանողների հետ անհրաժեշտ է լինում զրոյցներ անցկացնել, ներգրավել մի քամի անսամբլային կազմներում: Հաճախ դասերն անցկացնել ընկերների, այլ դասախոսների ներկայությամբ:

Ինչքան էլ որ ասվի, թե այդ անվատահությունը ֆիզիկական է, շարժողական, բայց նա միշտ հոգերանական է, կամ էլ երաժշտական, կամ էլ բնավորության որոշ հատկանիշներ (ամաչկտությունը, անվճռականությունը) արտահայտող: Հետևաբար նման ուսանողները, ոչ ամրողական իրենց ծրագրով նվազում են որևէ հաշվետու համերգի, կամ փորրածավալ համերգներ ենք կազմակերպում երաժշտական դպրոցներում: Մարդուն, որի մեջ խորն են բնակլում այդ թերությունները, անհնար է սովորեցնել միայն լավ նվազել, որքան էլ որ լավ ու վասակական տեխնիկական միջոցների տիրապետի, եթե նա պետք է դառնա երաժշտ, հարկավոր է, զուգահեռաբար ներգործել նրա «ֆիզիկական», ինչպես նաև «հոգեկան» ներաշխարհի վրա, այսինքն, հնարավորին չափ վերադաստիարակել նրան: Քնազդի պակասը, բացը, պետք է լրացնել բանականությամբ: Եթե տեխնիկական՝ մատների, ձեռքի, ամրող շարժողական ապարատի ուսուցումը ես մնա հոգևոր դաստիարակությունից, կհամարձակվենք անեցնել ոչ թե կատարող՝ այլ տեսաբան, երաժշտագետ, մասնագետ, որն ի զորու է խոսելու այդ ամենի մասին և ի զորու չէ ճշտգրիս ցույց տալու: Առավել կարծ կարելի է ասել, որքան մեծ է երաժշտության վրատահությունը, այնքան փոքր է և քիչ՝ տեխնիկական անվատահությունը: Առանց ամբողջաւ հոգեկան աշխարհի զարգացմանը, անընդմեջ տեխնիկական վարժեցումը չի բերի ցանկալի արդյունքի: Մեր կարծիքով պետք է համաձայնեցնել տեխնիկական՝ օգտակարը երաժշտական՝ գեղեցիկի հետ, չոր վարժության և երաժշտության ստեղծագործության միջև հակամարտությունն իջեցնել մինչև զրո:

Կատարություն ձեռք բերելու հարցին վերադաս-

Կ ա տ ա ր ո դ ա կ ա ն ա ր վ ե ս տ

լով՝ իին սկզբունքը, թե պէսոք է միշտ նվազել դանդաղ և ամուր, տեխնիկական առումով մեր օրերում յուրովի է դրսնորվում: Իսկական տարերային վիրտուոզը բնագույքար երիտասարդ հասակից նետվում է դժվարությունների վրա և այն հաջողությամբ հալթահարում: Այստեղ անհրաժեշտ են համարձակություն, թափ, ջերմանություն, էներգիա, կրոսուրժյուն, ըմբոնելու արագություն, իսկ այս ամենն էլ ինց տարանդն է, կամ էլ տաղանդի էական տարրերը: Դրա համար էլ երեխ մենք երբեմն տաղանդավոր վիրտուոզի մոտ լսում ենք տեսակի և ուժի չափազանցում: Եվ ուրեմն, ճիշտ, կենացք տրունացած, խորը, ամուր, բմբոնումով՝ լավագույնն է:

Շարժողական իհմնական թերությունը սարսափելի քաշվածությունն է, կաշկանդվածությունը, ազատության լիարժեք բացակայությունը: Նորմալ երեխան, որը կարողանում է ազատ քայլել, վագել, պարել, խաղաղ հանկարծ արձանի նման է դառնում: Պատճառները հասկանալի են՝ խնդրի դժվարությունը, վախը, լիովին ոչ երաժշտականությունը, որն ստիպում է հաճախ թարգում, իսկ երբեմն էլ բացահայտ չփրել երաժշտության դասերը: Կարևոր է սեփական նարմնին տիրապետումը, իսկ երաժշտը դրա կարիքը զգում է ոչ պակաս, քան մարզիկը կամ պարողը: Եվ դրա համար էլ երաժշտը, կարելի է ասել «մարզվում» է ոչ պակաս քան որևէ մարզիկ: Անհրաժեշտ է դիպուկ համեմատությունների, կերպարային մեկնաբանությունների օգնությամբ նվազողին հասկացնել, թե ինչ է ազատությունը: Ազատության ձեռքբերման նպաստող միջոց է նաև տեխնիկան: Մշանային լարումը խանգարում է աշխատանքին, առավել ևս հոգական ապրումներին: Քանի դեռ կա ֆիզիկական լարում, խոր չի կարող լինել ճիշտ նորոգ զգացողության և նորմալ հոգեկան կյանքի դերի մասին: Դրա համար հարկավոր է կարգի բերել մկանները, որպեսզի նրանք չկաշկանդեն գործելու ազատությունը:

Կարևոր հարց է նաև՝ ինչպես պատրաստվել երապարակային երույթին: Իհարկե, տալ ընթանուր խորհուրդներ, շատ ժժվար է, անզամ անհնարին, քանի որ գոյություն ունի խառնվածքի բազմազանություն: Բայց փորձենք մեկնաբանել առավել էականը: Առանձնապես բարդ է կատարողի խնդիրը, եթե նա երույթի համար պատրաստում է ոչ թե առանձին մեկ ստեղծագործություն, այլ համերգային ամբողջական ծրագիր: Այդ դեպքում նաև դժվար է լինում հասնել այն քանին, որ ամրող ծրագիրը պատրաստ լինի պահանջվող ժամկետում: Հաճախ որոշ ստեղծագործություններ լիովին պատրաստ չեն լինում ոչ բավարար աշխատանքի պատճառով, իսկ որոշ ստեղծագործություններ էլ՝ թարմությունը կորցրած: Երույթից առաջ վերջին օրերն անցնում են ծայրահեղ լարված, որոշ բաներ էլ նախապատրաստվում են հապշտապ: Սրանց խուսափելու համար անհրաժեշտ է այնպես պլանավորել աշխատանքը, որ ամենադժվար ստեղծագործությունները վաղորոր նախապատրաստվեն:

Ծրագրի կատարումն ամբողջությամբ պահանջում է լուսադրություն, կայունություն: Դրան նպաստում է երաժշտության զարգացման ներքին տրամարանության նկատմամբ ամսունջ հոգատարությունը, ներքին լսողու-

թյամբ հնչյունային կերպարը հնարավորին չափ վատ մարմնավորելու ձգություն: Ուշադրության կայունությունը, ֆիզիկական դիմացկունության, սովորության պես մշակվում է ոչ միայն բեմում փորձերի ընթացքում, այլ նաև ելույթի նախապատրաստման շրջանում:

Կատարող պետք է ստորի բնդգրկել ծրագիրն ամրղությամբ: Հարկավոր է «կերտել» ձևը, շոշափել երա մեջ լմոցրկված ստեղծագործությունների վիդապահությունը: Ելույթից առաջ պետք չեն շատ դիտողություններ, այլապես դա կարող է վաստանդրադառնալ կատարման վրա: Ելույթից առաջ հաջող կատարումները մեծ դեր են խաղում վստահության զրուցում: Պետք չէ կտրուկ վիխել ստվորության ուժիմիջը, քանի որ այն կարող է անբարենպաստ անդրադառնալ նյարդային համակարգի վրա, իհարկե նաև մեծ ուշադրություն պետք է դարձնել ձեռքերի խնամքին: Ինչպես նշում է Ն. Գոլուրվակայան. “*Не меняй за несколько дней до концерта сбоеего образа жизни. Не бойся работать, гулять, вести себя как обычно. Иначе ты разрушашаешь свой привычный ритм жизни, создаешь свое му сознанию новые трудности – заново оформить свое бытие. Включением привычных влияний и рефлексов ты создаешь пустоту, в которой все приобретает усиленный отзвык, вырастает преувеличенные размеры. Привычный ритм жизни поддерживает твою психику. Разобщение с привычными формами оставляет тебя без опоры, и всей тяжестью твоя оторванная мысль обращается на факт концерта, он становится твоей угрозой, средоточием, мир разделяется на до и после*” (4. Էջ 46-47):

Այս պրոբլեմը յուրաքանչյուրը պետք է լուծի յուրովի: Եվ վաս է, երբ ուսանողը ներարկվելով դասախոսի մանրախնդիր խնամակալությանը, իր ամրող նախահամերգային աշխատանքը կառուցում է նրա խորհրդով՝ դրանով իսկ անտեսելով իր անձնական հակումները, ունակությունները:

Բայց, երբ երույթի ժամանակ լսարանի հետ ստեղծվում է կոնստակար, երբ նրա շնչառությունը թեևավորում և առաջանում է ստեղծագործական ուժերի հորդացում, երբ լիովին զգում ես հոգերու և ֆիզիկական ազատություն, որը հնարավորություն է տալիս անարգել, անխափան իրականացնել գեղարվեստական մտահղացումները, այդ ժամանակ կարելի է խոսել լավ, բեմական իսկական ստեղծագործական ինքնազգացողության մասին: Ճանաչելով այդ քանիկ զգացումը՝ պետք է զգուշ պահպանել այն հիշողության մեջ և ամեն անզամ փորձել նորովի վերաբարերել այն կատարման ժամանակը: Դրան կարող է օգնել կատարվող երաժշտությամբ տարվելը: Լիովին նրան տրվել, վայելել, բավականություն ստանալ նրա գունդությունից և ձգուել, որ ունկնդիրը ևս վայելի այն ու ապրի քեզ հետ միասին: Այսին է ցանկալի նապատակին հասնելու ուղին: Մարդու էությունն է բերում լավ նվազին:

Սեկունդ հարց է՝ բեմում կատարման ժամանակ ինքնահսկում պետք է լինի, թե՞ ոչ: Կան բազմաթիվ

Կ ա տ ա ր ո ղ ա կ ա ն ա ր վ ե ս տ

պատասխաններ: *Մեկն այն է, որ կատարողը պիտք է ամբողջ ժամանակ հսկի իրեն կատարման ընթացքում:* Սրա հետ մենք չենք կարող լիովին համաձայնվել: Իրականում մենք կարող ենք լիովին հսկել այն դեպքերում, եթե չենք ապրում երաժշտությամբ: *Քննադատությունը, ինչ խոր, անհրաժեշտ է, բայց, ոչ կատարման ժամանակ:* Իհարկե, հրապարակային ելույթի ժամանակ վտանգավոր կլիմեր ամբողջ ընթացքում շեշտը դնել թերությունների վրա: *Ստեղծագործական վիճակը դրանով էլ բնուրագրվում է, որ կատարողի մոտ կերպարներով տարվելը և այդ պրոցեսի հսկումը անհրաժեշտ են, առանց որի երույթը հաջող լինել չի կարող:*

Բեմը, որպես կանոն, առաջացնում է հուզում: Ծառ դեպքերում հուզումը օժանդակում է առավել վատ կատարմանը: Հայտնի է, որ օժանդակ տասնորդները սովորաբար ավելի լավ նվազում են հրապարակային ելույթի ժամանակ, քան դասարանում: *Մեր փորձառության շրջանում եղել է ուսանող, որին դասարանային աշխատանքը անհետաքրքիր էր, սիրում էր բեմը և կարողանում էր իր ստեղծագործական ոգեշնչումն արտահայտել բեմում:* Բայց և շատ դեպքերում հուզումնը բացասարա է անդրադասնում: Ումանք նվազում են ընկածածիք, չոր և ֆորմալ, հակառակ տեսային պայմաններում որպայալ կատարմանը: Ումանք էլ, ընդհակառակը, դառնում են չափից դուրս համարձակ, ազատ և նրանց նվազը ձեռք է բերում միտումնավոր, արհեստական երանգ: Հուզումը հաճախ անբարենպաստ է անդրադասնում կատարման տեխնիկական կողմից վրա, իսկ երբեմն առաջացնում է սխալներ, դադարմել և այլն: Դա զայիս է նաև նրանց, որ կատարողը գիտի, որ ինքը գտնվում է «ուրիշների», լուղեների տեսադաշտում: Մարդու կողմից նման հայեցակետի ինքնազգացումը կարող է լինել և հրաշալի, և տանջալից: Ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչպես է ընդունում իրեն ուղղված ուշադրությունը՝ բարյացակամ, թե անքարյացակամ: Բոլոր դեպքերում նման հայեցակետը կատարողի մոտ առաջացնում է երկակի զգացողություն: *Մի կողմից նաև կախման մեջ է արտաքին աշխարհից և որում կամ երևակայում է ուրիշներից դուրս եկող և իրեն վերաբերող ազդանշանները, իսկ, մյուս կողմից նրա ուշադրության կիզակետը գտնվում է հենց իր մեջ:* Նա մտահոգված է իր գործողության ճշտությամբ, իր հաջողությամբ կամ անհաջորդությամբ, և հետևաբար, ցանք է գործադրում, որպեսզի, չկորցնելով դրսից վերահսկման կապը, լավ նվազի: Դրա պատճառը ուշադրության կենտրոնացումն է իր վրա: *Ուշադրությունը պարզապես զրադարձ է: Կատարողն ինքն իրեն թույլ չի տալիս զրադարձ է նրանով, ինչով նա պետք է զրադարձ: Պետք է ազատվել վախսից, պետք է կարողանալ հասնել ինքնաշխատակետնաման:* Անհրաժեշտ է ուժեր ներդնել, որպեսզի

Բանայի-քառեր. Ելույթ, կատարողի հոգեբանական ազատությունը, երաժշտական ստեղծագործություն, գեղարվեստական մտածողություն, հուզումը, ֆիզիկական հոգեբանական պատրաստվածություն, թեմ, էնոցիոնալ ակտիվություն:

Ключевые слова: Выступление, психологическая свобода исполнителя, музыкальное сочинение, сцена, эмоциональность, физическая, психологическая подготавка, художественное мышление, эмоциональная активность.

Keywords: performance, psychological freedom of the performer, scene, emotionality, physical, psychological training, art thinking, emotional activity.

գտնես և բացահայտես ինքը թեզ: Կարելի է լրիվ համոզվածությամբ, երևակայությամբ պատկերացնել սեփական հաջողության տեսարանը, իսկ ամենավճռական պահին կորցնել դա: Եվ ընդհակառակը, որոյ կատարողներ պատասխանառու ելույթից առաջ հուզմունքից է մնում կորցնեն բանականությունը, իսկ պահանջվող ակնրարրին ինչ-որ անընդունելի կերպով հավաքում են իրենց և ամեն ինչ հրաշալի է անցնում: Ոչ այս և ոչ էլ մյուս դեպքում ոչ որ իրեն հաշիվ չի տալիս իսկ ինչու այդպես ստացվեց:

Երբեմն համերգից առաջ օգտակար է լարվածությունը նախապես ծախսել, որպեսզի այն զսպանակի պես լարված ամենասնարմար պահին չբացվի: Ծառ կատարողներ աչքի են ընկնում մեծ հուզմունքությամբ, որը չեն թարցնում: Ինքնաներշնչմամբ նախօրոր թուլացնում կօգնի հուզմունքը իշեցնել տանելի աստիճանի: Եվ ասել, որ պետք է աշխատել չհուզվել, դա անօրուտ ինքնախարեւորյուն է, հուզմունքը դրանից միայն կարող է սաստկանալ: Խնդիրն այն չէ, որպեսզի հուզմունքը վերացնենք, այլ այն, որպեսզի դա գործին օգնի: “**Хейфец мечто сформулировал то, что необходи́мо吳运甫 8 в его карьере: “Нервны тогеадора и умение сосредоточиться, свойственное буд-дисткому монаху”**” (5. էջ 88):

Հայտնի է, որ երաժշտության ընկալումը, նրա ձևի գիտակցումը և բովանդակության ըմբռնումն ընդունակ են ուժեղացնելու էսթետիկական հուզումը: Այլ կերպ ասած, ինտելեկտուալ ակտիվությունը որոշակի հաճագանանքներում վիխսակերպվում է էնոցիոնալ ակտիվության: Էնոցիոնալ անմիջականությունը, ներշնչվածությունը, հուզումներով նվազը կատարողի արվեստն է: Այսպիսի կատարման աղյուրը երաժշտության պետական ըմբռնումների, հնչյունային կախարդանքի մեջ ներթափանցելն է:

ԾԱՆՈԹ-ԱԳՐՈՒԹ-ՑՈՒՆ

1. *Станиславский К. С., Работа актера над собой.., Собрание сочинений., том 3, часть 2., М., 1990. Stanislavskij K. S., Rabota akteora nad soboj., Sobranie Sochinenij., tom 3, chast' 2., M., 1990.*
2. *Неյгауз Г. Г., Об искусстве фортепианной игры., записки педагога., М., 1982. Nejgauz G., Ob iskusstve fortepiannoj igry., zapiski pedagog-a., M., 1982.*
3. *Гинзбург Г. Р., Статьи. Воспоминания. Материалы., М., 1984. Ginzburg G. R., Stat'i. Vospominaniya. Materialy, M., 1984.*
4. *Голубовская Н. И., О музыкальном исполнительстве., Л., 1985. Golubovskaya N. I., O muzykal'nom ispolnitel'stve., L., 1985.*
5. *Сигети Ж., Воспоминания. Заметки скрипача., М., 1969. Sigetii Zh., Vospominaniya. Zametki skripacha., M., 1969.*

Կ ա տ ա ր ո դ ա կ ա ն ա ր վ ե ս տ

Տեղեկություններ հեղինակի մասին. ԱՆՈՒԾ ԳԱԳԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ծ. 10.8.1978 թ. ք. Երևան): Ավարտել է՝ 1995-ին
Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանի ջուրակի բաժինը (Յ. Մանուկյանի դասարան), 2000-ին՝ ԵՊԿ ջուրակի
բաժինը (պրոֆ. Գ. Սմբատյանի դասարան), 2002-ին՝ ԵՊԿ-ի ասպիրանտուրան՝ «Կամերային անսամբլ» մասնագիտու-
թյամբ (պրոֆ. Ա. Մարգարյանի դասարան): Դասավանդում է՝ 1999-2001 թթ. Ա. Բաբայանի անվ. երաժշտամանկա-
վարժական բոլեցում ջուրակի մասնագիտական և կամերային անսամբլի դասախու-
թում անվ. ՍՍԵԴ-ում, որպես մասնագիտական ջուրակի ուսուցչուի, 2000-ից՝ ԵՊԿ կամերային անսամբլի ամբիոնում,
որպես ասիստենտ, ինչ 2006-ից՝ նույն ամբիոնի՝ դասախուտ: Աշխատել է՝ 2007-2008 թթ. Ա. Տիգրանյանի անվ. երաժշտամանկա-
վարժական բոլեցում ջուրակի մասնագիտական և կամերային անսամբլի դասախու-
թում անվ. ՍՏԵԴ-ում, որպես մասնագիտական ջուրակի ուսուցչուի, 2008-ից՝ նույն ամբիոնի՝ դասախուտ: 2011 թ. նրան շնորհվել է լողենսի
գիտական կոչում «Երաժշտական արվեստ» մասնագիտուրյամբ: Արժանացել է՝ 2012 թ. «Կերածնունդ» միջազգային
մրցույր-փառատոնում, 1-ին կարգի մրցանակի: Նրան հրավիրել են «Արտ Սյուզիք» և «Արվեստի սերունդ» միջազգային
մրցույր-փառատոններին, որպես «կամերային անսամբլ» և «ջուրակ» մավանակարգերում հանձնախմբի անդամ: Հեղինակ
է՝ գիտական հոդվածների և կազմելու ու հրատարակելու նույնական ժողովածուներ, նաև որպես մասնագիտական խմբագիր՝
Ա. Սուկասյան «Այսուրյանի ավին» պատկերներ լարային քառյակի համար, Եր., ԵՊԿ հրատարակություն, 2010 թ.,
Վ. Բաբայան «Երեք ուժ-տրոսապեկցիաներ» ջուրակի և դաշնամուրի համար, Եր., ԵՊԿ հրատարակություն, 2010 թ.,
«Роль сонат для скрипки и фортепиано Л. Ван Бетховена в учебном репертуаре», //Երաժշտական Հայաստան, #1 (38) 2010 թ., էջ 61-63: Աշխատանքային գործունեության ընթացքում նա ունեցել է ակտիվ համերգային
գործունեություն: Նրա սաները միջազգային մրցույր-փառատոնների դափնիկիրներ և դիվումակիրներ են, շատերն եւ
մասնակցել են հաշվետու և այլ համերգների:

Сведения об авторе: ХАЧАТРЯН АНУШ ГАГИКОВНА (род. 10. 08.1978). В 1995 году окончила Музыкальное училище им. Р. Меликяна (класс Ю. Манукяна). В 2000 году с отличием окончила Ереванскую государственную консерваторию им. Комитаса по классу скрипки проф. Г. Смбатяна, в 2002 г. - аспирантуру по классу камерного ансамбля (класс проф. А. Маркарян). С 1999 по 2001 год работала преподавателем скрипки и камерного ансамбля в Музыкально-педагогическом колледже им. А. Бабаджаняна. С 2000 года по сей день работает педагогом по классу скрипки в Специализированной музыкальной школе-декадилетке им. П. Чайковского. С 2007 по 2008 работала заместителем директора Музыкальной школы им. А. Тиграняна. С 2000 года работает на кафедре камерного ансамбля ЕГК в качестве ассистента, а с 2006 - в качестве педагога. С 2008 года по сей день является директором музыкальной школы им. А. Аджемяна. С 2011 года - доцент ЕГК. В 2012 году в международном конкурсе-фестивале "Возрождение" получила 1-ю премию. Член жюри в номинации "Камерный ансамбль" и "Скрипка" международных конкурсов-фестивалей "Art music" и "Поколение искусства". Составитель и профессиональный редактор изданий: С. Сукиасян - струнный квартет "На берегу реки Ахурян", Ер.: Издательство ЕГК., 2010; В. Бабаян "Три ретроспекции" для скрипки и фортепиано. Л. В. Бетховена в учебном репертуаре", //Музыкальная Армения, N 1 (36) 2010., С. 61-63. Неоднократно выступала с концертами, ее студенты - лауреаты и дипломанты международных конкурсов и фестивалей, участники отчетных концертов.

Information about the author: ANUSH GAGIK KHACHATRYAN (born 10.8.1978 Yerevan) In 1995 graduated from musical college after Romanos Meliqyan violin class of Y. Manukyan', in 2000 from YSC's violin section of professor G. Smbatyan's class. In 2002 graduated from the YSC Post-graduate course of the A. Margaryan's class with the profession "Chamber Ensemble". From 1999 to 2001 she taught in musical pedagogical college after A. Babajanyan as a pedagogue of professional violin and Chamber Ensemble, from 2000 till today is a pedagogue of professional violin in SCMS after P. I. Tchaikovsky. From 2007 to 2008 worked in musical school after A. Tigranyan as a deputy director. From 2000 has been working at YSC' s Chair of Chamber Ensemble as an assistant, and since 2006 as a lecturer at the same department. From 2008 till today works in musical school after A. Achemyan as a director. In 2011 A. Khachatryan got a PhD degree with the specialty "musical art". In 2012 participated in the Renaissance International Contest-Festival and has been awarded with the first prize. Khachatryan has been also invited to the Art Music and Art Generation International Contest-Festivals as a member of the Chamber Ensemble and violin nominations. Khachatryan is an author of scientific articles and has compiled and published note collections as well she is a professional editor of some works such as S.Sukiasyan "On Akhuryan's shore" images for the string quartet, Yer., YSC publishing house, 2010, V. Babayan "Three re-tricks for violin and piano", Yer., YSC publishing house, 2010., "The role of sonata for violin and fortepiano" published in / Musical Armenia, N 1 (36) 2010., P. 61-63. During his career A. Khachatryan had an active concert practice, her students were the laureates of international competition-festivals, have diplomas, many of them participated in concerts.

Резюме

Скрипачка, доцент кафедры камерного ансамбля ЕГК **Ануш Гагиковна Хачатрян.** - “О психологической свободе исполнителя на сцене”.

В научно-методической работе рассматривается вопрос о психологической свободы исполнителя на сцене. Автор анализирует многие особенности технической, эмоциональной, физической, психологической подготовки исполнителя к сценическому выступлению.

Summary

Violinist, Docient of Chair Chamber Ensemble of YSC **Anush G. Khachatryan.** - “About psychological freedom of the performer on the stage”.

In scientifically methodical work the question of psychological freedom of the performer on the stage is considered. The author analyzes many features of technical, emotional, physical, psychological training of the performer to a scenic performance.